

Կայարանի Տեսիլքներն Ու Պատրանքները

ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵԻԻԶԵԱՆ

Հարցազրույց Ֆրեզնոյում բնակուող հայ գեղանկարիչ Հելզըլ-Թագուհի Անթառամեան-Հոֆմանի հետ

Երկրորդ աշխարհամարտից յետոյ մինչեւ ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանը նման էր կայարանի մեծ սպասարահի, որտեղ «ուղեւորներից» ոմանք ժամանում էին, ոմանք մեկնում, ոմանք էլ սպասում մեկնումի իրենց ժամին: Դրանք մարդիկ էին, ովքեր փնտռում էին Հայրենիքը՝ յաճախ չնկատելով կամ չգիտակցելով նրա իրական բովանդակությունը: Աւետեաց երկրի տեսիլքի ու սովետական կոշտ հասարակարգի, ռուսական կայսրության ծայրագուլառի բարդությունների եւ դրսից ներմուծուած (հիմնականում՝ Արեւմտեան) մշակոյթի անընդհատ հակասութիւններն «ուղեւորներին» ստիպում էին, կայարանից դուրս չեկած՝ վերադարձի որոշում կայացնել: Շուրջ յիսուն տարուայ ընթացքում այսպէս երկիր մտան եւ երկրից հեռացան տասնեակ հազարաւոր ընտանիքներ:



Հելզըլ Անթառամեան-Հոֆման

Անթառամեանները մեկն են նրանցից: Հայրը՝ ծնուած ԱՄՆ Վիսկոնսին նահանգում, մայրը՝ Ֆրանսիայի Լիոն քաղաքում եւ դուստրը՝ Հելզըլ-Թագուհին՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում: Երբ Հելզերն ընդամենը հինգ տարեկան էր, Անթառամեանները հեռացան Հայաստանից՝ փոքրիկ աղջնակի մտքում առաջացնելով բազմաթիւ մտքեր: Այդ մտքերն ահա, շուրջ յիսուն տարի անց դարձել են գեղանկարիչ Հելզըլ Անթառամեան-Հոֆմանի արուեստի նախագծի առարկան: Նախագիծ, որի մեջ միահիւսուած են յուշ ու բանաւոր պատմութիւններ, լուսանկարներ, փաստաթղթեր եւ, ի հարկէ, վաղ մանկութեան տեսարաններից պոկուած գոյներ ու պատկերներ:

Մարտի 21-ին Ֆրեզնոյի հայկական թանգարանում Անթառամեան-Հոֆմանը հանրութեանը ներկայացրեց «*Repatriation and Deception: Post World War II Soviet Armenia*» նախագիծը:

Սփիւռքում աւելի *ակտուալ* է գեղասպանութեան եւ վերապրումի *թեմա*-ն: Ինչո՞ւ որոշեցիք զբաղուել հայրենադարձութեամբ:

Իմ ընտրութիւնը չէր: Հայրենադարձութեան թեման ինձ ընտրեց: Դա իմ գոյութեան փոխաբերական եւ ուղղակի պատճառն է: Ես ծնուել եմ Սովետական Հայաստանում հայրենադարձների ընտանիքում: Իմ մեծ ծնողները 2-րդ աշխարհամարտից յետոյ հայրենիք էին ներգաղթել ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից: Ընտանիքս հեռացաւ Խորհրդային

միությունից 1965-ին: Մենք երկիրը լքողների շարքում առաջիններից էինք: Աւելի ուշ՝ շատ եմ լսել 50-60-ականների Հայաստանի կեանքի մասին՝ առանց գիտակցելու *Հայրենադարձություն* երեւոյթի բովանդակութիւնը: Արխիւներում պահուող փաստաթղթերում եւ տպագիր մամուլում հանդիպող անունները լսել եմ դեռ մանկուց: Երբ 70-ականներին հայրենադարձ ծանօթներից շատերը լքում էին Հայաստանը, մերոնք ասում էին. «Գիտե՛ս՝ այսպէս թէ այնպէս լքում են երկիրը»: Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ հայրենադարձ հայերի վերադարձը սովետական համակարգի կազմակերպած արշաւի մի մասն էր: Հէնց այդ պատմութիւնն էլ ուզում էի վաւերագրել:



2011-ին ստանալով գիտական աստիճան Ֆրեզնոյի պետական համալսարանի արուեստաբանական *ֆակուլտետ*-ում, սկսեցի հայրենադարձների հանդէպ ունեցած իմ զգացմունքներն արտայայտելու ուղիներ փնտռել: Ես հիմա փորձում եմ նկարների միջոցով հայրենադարձ հայերի հանդէպ նուիրածութիւնս փոխանցել: Նրանք զոհաբերութիւնների գնով իրենց ներդրումն ունեցան Հայաստանի առաջընթացի գործում:



Լինելով նկարիչ՝ ինչպե՞ս էք համադրելու կերպարուեստն ու փաստագրութիւնը:

Հայրենադարձների մասին պատմութիւնները նկարներիս համար ներշնչանք են: Կարելի է ասել *Հայրենադարձութեան* պատմութիւնն իմ մուսան է: Փաստավաւերագրութեան գործընթացն իր մէջ ներառում էր հայրենադարձների հետ առօրեայ շփումներ: Աւելի ուշ, երբ սկսեցի կայքիս աշխատանքերը, հասկացայ, որ հաւաքուած

պատմութիւններն ուրիշների հետ կիսելու կարիք եմ զգում, որովհետեւ դրանք եղել են Հայաստանի սոցիալական եւ ազգագրական պատմութեան մի մասը: Իմ կայքը գործ է

ընթացքի մեջ: Այն աւելի հարստացնելու եւ նման *թեմա*-ներ արծարծող այլ կայքերին յղումներ տալու յոյս ունեմ: Արուեստի իմ գործերը համարում եմ այդ ժամանակ Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնների բնագոյային եւ վերարտադրողական արձագանգ: Նկարելուն զուգահեռ նաեւ գրում եմ: Հետազօտութիւններս ու կատարած հարցազրոյցներս դառնում են *էսսէ*-ներ:

Ձեր կարծիքով, 1946-49 թուականներին Հայաստան ներգաղթած հայերի մեծ մասն ինչո՞ւ հեռացաւ Հայրենիքից:

Կարծում եմ իւրաքանչիւր ընտանիք վերդառնալու իր դրդապատճառն ունէր: Բայց այդ դրդապատճառները քօղարկւում էին հայրենիքի հանդէպ ունեցած նուիրուածութեամբ եւ ծայրայեղ զգացմունքայնութեամբ: Հայրենդարձները կարելորում էին իրենց լեզուով խօսող եւ իրենց աւանդոյթներն ունեցող մարդկանց միջավայրում ապրելը: Անցեալ տարի հարցազրոյց էի վարում ամերիկահայ հայրենադարձ մի կնոջ հետ, ով ներգաղթել էր քսան տարեկանում, նա պատմում էր, որ չի ցանկացել լքել Միացեալ Նահանգները: Հօր հետ Նիւ Եորքում մասնակցել է հայրենդարձութեան «պրոպագանդայի» ժողովներին, բայց դա արել է դժկամութեամբ: Մի անգամ հայրենիք վերադարձածների մասին պատմող ֆիլմի դիտման ժամանակ, նկատել է տիպիկ հայ տղամարդու՝ արցունքն աչքերին եւ այդ տեսարանը փոխել է նրա կարծիքը: Նա չի ցանկացել պառակտել



ընտանիքը, ինչպէս Յեղասպանութիւնն էր վարուել իր ծնողների հետ: Հայրենադարձութիւնը *պրոպագանդող* այդպիսի ֆիլմեր ցուցադրում էին հայկական սփիւռքի տարբեր համայքներում: Ֆիլմում պատկերուած դրուագներն ազդում էին մարդկային եւ ազգային զգացմունքների վրայ, յատկապէս նրանց՝ ովքեր յիշում էին Արեւմտեան Հայաստանում ապրած կեանքը:

Հիմա շատ է խօսուում Հայաստանի *դեմոգրաֆիա*-կան բարդ խնդիրների մասին: Կարծո՞ւմ էք, որ կրկին հնարաւոր կը լինի հայրենադարձութիւն կազմակերպել եւ ի՞նչ է հարկաւոր դրա համար առաջին հերթին:

1965-ից յետոյ Հայաստան այցելել եմ երկու անգամ: Մէկը՝ 2006-ին, որդուս հետ որպէս զբօսաշրջիկ, երկրորդ անգամ 2012-ին՝ որպէս հետազօտող: 2006-ին յուզական պահեր շատ են եղել, երբ այցելել եմ այն

վայրերը, որոնք յիշում են միայն ընտանեկան լուսանկարներից: Երեւանում ոտքով քայլելուց եւ տեղացիների հետ զրոյցներից յետոյ եւ *դեմոգրաֆիա*-կան տեղաշարժ նկատեցի: Աւելի ուշ՝ 2012-ին, կտրուկ փոփոխութիւնների ականատես դարձայ, արեւմտականացման շարունակական մղում նկատեցի: Հայաստանը գեղեցիկ երկիր է եւ հետեւաբար դրա որոշ մասունքներ կարող են գրաւել Մփիւռքում ապրող հայերին կամ որպէս այցելու կամ էլ՝ «հայրենադարձ»: Մասսայական հայրենադարձութեան կազմակերպումն, ինչպէս դա արուեց Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ, անհաւանական եւ համարում անյթան ժամանակ մինչեւ Մփիւռքի մեր հայրինակիցներն իրենց վտանգուած չզգան, ինչպէս օրինակ Միրիայի եւ Միջին Արեւելքի դէպքում է: Երկրից երկիր ճանապարհորդելու դիրքի նուրբ այն եւս դարձնում է անհաւանական: Եթէ նրանք «վերդառնան» դա միայն կարող է լինել անհատական ձգտումների վրայ կայացուած որոշում: Նախքան արտերկրի քաղաքացիներին գրաւելը, Հայաստանն առաջին հերթին իր ներքին խնդիրներից շատերին պիտի ուշադրութիւն դարձնի: Կառավարութեան *կոռուսպ*-ացուածութեանը, ապօրինի գործարարութեանը, մարդկանց առողջութեանը եւ շրջակայ միջավայրին վերաբերուող խնդիրներին: Հայաստանը նախ պէտք է տնտեսական ծրագրեր իրականացնի տեղի բնակչութեան համար: Նկարչի տեսակէտից, կը ցանկանայի Երեւանը գեղեցկացնելու եւ Հայաստանի բնութեան ու մշակոյթի իմաստալից պահպանման *ինտենսիվ* ջանքեր տեսնել:



Յուսով եմ, նկարներիս եւ *էսսե*-ներիս միջոցով հայրենադարձութեան պատմութեան մեկնաբանումը այդ թեմային անդրադառնալու եւ խօսակցութիւն ծաւալելու առիթ կը դառնայ: Կառավարութիւնն արդէն իսկ ներողութիւն է խնդրել հայրենադարձներից եւ Մփիւռքի նախարարութիւնը պէտք է Հայաստանում հայրենադարձների կատարած ներդրումները պաշտօնապէս ճանաչելու քայլեր ձեռնարկի: Գուցէ ամենամեայ յիշատակի օր սահմանուի: Հայաստանի Հանրապետութիւնում ապրող հայերից քանի՞սն են ծանօթ 40-

ականների վերջին կազմակերպուած հայրենադարձութեան պատմութեանը, քանի՞սն են գիտակցում պատմական այդ իրադարձութեան կարեւորութիւնը: Կարծում եմ՝ ցեղասպանութեան ճանաչմանը զուգահեռ պէտք է ճանաչենք նաեւ նրանց, ովքեր «հայրենադարձուեցին» եւ յատկապէս նրանց, ովքեր զոհեցին իրենց կեանքն այդ գործընթացում:

Երեւան, Հայաստանի Հանրապետութիւն